10

Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL
Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk
Website: www.armenianschool.org.uk

Յուլիս 2024
Լրատու թիւ 30

Ողջոյնի Խօսք

Յուլիսի 7-ին գեղեցիկ հանդէսով, եզրափակուեց 2023-2024 ուսումնական տարին: Ինչպէս անցած ուսումնական տարիները այս տարի նոյնպէս դպրոցի համար եղել է շատ հետաքրքիր և բազմաբովանդակ:

Վարժարանի կրթական յանձնախումբն անցկացրեց այս տարուայ աւարտական քննութիւնները: Աւարտական դասարանի աշակերտները յաջողութեամբ յանձնեցին հայոց լեզուի բանաւոր, գրաւոր և կարդալու քննութիւնները: Շնորհաւորում եմ մեր սիրելի շրջանաւարտներին, իրենց ծնողներին և ուսուցչուհիներին, ովքեր տարիներ շարունակ հետևել են մեր երեխաների հայեցի կրթութեանն ու դաստիարակութեանը: Մեր դպրոցի շրջանաւարտներին ցանկանում եմ, որպիսզի բոլորն իրենց արժանի տեղը գտնեն կեանքում: Մաղթում եմ ուժ ու եռանդ, նպատակների և իղձերի իրականացում և թող յաջողութիւնն ու երջանկութիւնը, լոյսն ու բերկրանքը միշտ ուղեկից լինեն իրենց: Բարի ճանապարհ դէպի նոր կեանք, սիրելի շրջանաւարտներ:

Երրորդ եռամսեակում վարժարանում կատարուեցին հետևեալ աշխատանքները: Մարզական օր, աշակերտների Գիտելիքի մրցոյթ, Ամավերջի հանդէս:

Ծնողական յանձնախումբը և հոգաբարձուները կազմակերպեցին դաշտահանդէս:

Մեր առաջին և վեցերորդ դասարանների աշակերտները մեր հայրենիքին նուիրուած գեղեցիկ ոտանավորներով ելոյթ ունեցան Սրբ. Եղիշէ եկեղեցում, Հայոց Ցեղասպանութեան 109-րդ տարելիցի առթիւ, Բրիտանահայ Համայնքային խորհրդի կազմակերպած յուշ երեկոյի ընթացքում:

Վարժարանի այս տարուայ ամավերջի հանդէսը նուիրուած էր հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրեանի 120, ֆրանսահայ աշխարհահռչակ երգահան, երգիչ Շառլ Ազնաւուրի 100 և տաղանդաւոր գրող Պարոյր Սևակի 100 ամեակներին:

Օգտուելով առիթից Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանի կողմից խորին շնորհակալութիւն եմ յայտնում դպրոցի բոլոր բարերարներին, հոգաբարձուներին, կրթական և ծնողական յանձնախմբերի անդամներին, վարժարանի բարեկամներին: Շնորհակալութիւն բոլոր ծնողներին, ովքեր գիտակցելով հայկական ինքնութեան համար՝ հայեցի կրթութեան անհրաժեշտութիւնը, իրենց հանգստի ժամերը զոհաբերում են, որպիսզի իրենց երեխաները անգլիական միջավայրում հայ մեծանան:

Շնորհակալութիւն մեր սիրելի ուսուցչուհիներին, ովքեր իրենց ուժն ու եռանդը չեն խնայում մեր երեխաների հայեցի կրթութեան և դաստիարակութեան համար: Ցանկանում եմ բոլորիդ ուրախ ամառային արձակուրդներ:

Վերամուտ՝ սեպտեմբերի 8, 2024 թ

Ռ Թաթուլեան
Տնօրինուհի

ԱՆԻ

ՎԱՆ

ԿԱՐՍ

Անի «Կարմիր»

59 կէտ

Վան «Կապոյտ»

59 կէտ

Կարս «Նարնջագոյն»

72 կէտ

Այս տարուայ յաղթող խումբը Կարսն է գերագոյն թիւով կարմիր կէտեր հաւաքած ըլլալով:

Հայոց Ցեղասպանության 106-րդ տարելիցը

Ապրիլի 26-ին Բրիտանահայ Համայնքային խորհուրդը կազմակերպել էր յիշատակի երեկոյ նուիրուած Հայոց Ցեղասպանութեան 109-րդ տարելիցին:

Ելոյթ ունեցան Գ Թահթաեան Կիրակնօրեայ ազգային վարժարանի առաջին և վեցերորդ դասարանների աշակերտները ներկայացնելով՝ Եղիշէ Չարենցի, Համօ Սահեանի, Յովհ. Թումանեանի, Վահագն Դաւթեանի, Նանսէն Միքաէլեանի ստեղծագործութիւնները:

On April 26, the British Armenian Community Council organised a commemorative evening dedicated to the 109th anniversary of the Armenian Genocide.

K. Tahtaian Armenian Community Sunday School was represented by a few Year 1 and Year 6 pupils who performed some of the works of Yeghishe Charents, Hamo Sahian, Hovh. Tumanian, Vahagn Davitian, Nansen Mikaelian.

Աշակերտական Գիտելիքներու Մրցույթ - Students' Quiz

Մայիսի 12-ին տեղի ունեցավ աշակերտների գիտելիքի հետաքրքիր մրցույթը: Բոլոր երեխաները լավ պատրաստված էին եւ ակտիվ մասնակցում էին բոլոր հարցերին: Մրցույթին երեխաները ներկայացան կարմիր, կապույտ, նարնջագույն խմբերով : Կարմիր խումբը կոչվում էր Անի, կապույտը՝Վան իսկ նարնջագույնը Կարս: Հաղթող խումբ ճանաչվեց Անին վաստակելով 15 միավոր: Երեխաները շատ ոգեւորված էին: Հաճելի էր այդ ամենը տեսնել եւ հպարտանալ թե ինչպես են մեր սիրելի աշակերտները տիրապետում Հայկական լեռնաշխարհին և հայ ժողովրդի պատմությանը: Շնորհակալություն մեր շատ սիրելի տնօրեն՝ Ռուզաննա Թաթուլյանին որ ամեն տարի ջանք չի խնայում աշակերտներին մասնակից դարձնելու այսպիսի գեղեցիկ միջոցառումներին:

On May 12, an interesting competition of students' knowledge took place. All pupils were well prepared and actively participated in answering all questions. They presented themselves at the competition in red, blue and orange groups. The red group was called Ani, the blue group was called Van, and the orange group was called Kars. Ani was recognised as the winning group by scoring 15 points. The children were very excited. It was nice to see all that and to be proud of how our beloved students mastered the subject of the Armenian Highlands and the history of the Armenian people. Thank you to our beloved headteacher, Ruzanna Tatulyan, who spares no effort every year to make pupils participate in such beautiful events.

Անի Վան Կարս

Մի արև կա, մի երկինք, ու մի մայրիկ թանկագին

Այս խորագիրն էր կրում «Մայրերի Տոն»-ին նվիրված հանդեսը, որը տեղի ունեցավ Մայիսի 12-ին:

Դպրոցի սրահում մի ուրիշ տոնական աշխույժ մթնոլորտ էր: Մայրիկների ներկայությունը՝ իրենց գեղեցիկ ժպիտներով և գույնզգույն ծաղիկները ա՛յդ օրը հատկապե՛ս շատ համահունչ էին, և միախառնվել էին երեխաների ուրախ տրամադրության հետ:

Առաջին դասարանի աշակերտները՝ ուսուցչուհի՝ Անուշ Գեղամյան, ջերմ ու չարաճճի ժպիտներով անհամբերությամբ էին սպասում, թե երբ պիտի իրենց պատրաստած գեղեցիկ տողերը փոխանցեն իրենց սիրելի մայրիկներին:

Ծաղիկներն այսօր ուրիշ բույր ունեն,
Երկինք ու արև ուրիշ գույն ունեն,
Գունեղ է, պայծառ
Գարունը այնքան
Լի է մայրիկիս բույրո՛վ աննման:

Այս տողերով է՛լ երեխաները սկսեցին հանդեսը: Մեր քաղցրանուշ մայրենի լեզվով յուրաքանչյուր տողը արտասանելիս երեխաները իրենց ուրախությունն ու ջերմությունը, իրենց սերն ու երախտագիտությունն էին փոխանցում իրենց սիրելի մայրիկներին՝ «Ես իմ մայրիկի ժպիտն եմ սիրում», «Ես իմ մայրիկի աչքերն եմ սիրում», «Ամբողջ աշխարհում նման մայրիկիս, մի ուրիշ մայրիկ չես գտնի երբեք», «Ես իմ մայրիկի համբույրն եմ սիրում», «Մայրիկիս պատրաստած համեղ կերակուրն եմ սիրում»

Այո, «Մայր» բառը քաղցր ու անուշ է հնչում բոլոր լեզուներով, իսկ մոր մասին հնչած երախտագիտության ցանկացած խոսք՝ ջերմ ու հուզիչ:

Անշուշտ շատ ուրախալի է, որ մեր երեխաները ճիշտ գիտակցում և գնահատում են, թե ինչ արժեք է ներկայացնում մայրը մեր կյանքում, հատկապես մասնակիցը լինելով նման գեղեցիկ միջոցառումների՝ վստահաբար է՛լ ավելի են արժեվորում մայրիկների մեծ և կարևոր դերը, նրանց անսահման նվիրումը, սերը, ջերմությունն ու բարությունը:

Միջոցառումը հիմնավորեց այն փաստը, որ հայ ժողովրդի համար «Մայր» հասկացությունը արժեք ու կարևորություն է այնքանով, որ դարձել է՝ Մայր հայրենիք, Մայր Հայաստան, Մայր լեզու, Մայր քաղաք, Մայր դպրոց, Մայր Օրենք ..

Մայրերն են պահել մեր հայոց լեզուն, մեր մանուկներին կաթի հետ տվել:

Մայրերն են պահել մեր հայոց երգը, երբ մանուկներին օրոր են ասել:

Եվ հայ մայրերն են պահում այսօր էլ մեր երգը, լեզուն, մեր վսեմ ոգին սրտով նվիրված մեր Հայրենիքին:

Այս տողերով էլ ավարտվեց գեղեցիկ միջոցառումը և մայրիկներին նվիրված ուրախ երգի և ծափերի ներքո երեխաները իրենց ուրախ ժպիտներով ծաղիկներ նվիրեցին բոլոր մայրիկներին....

On 12th May, Mothers' Day was celebrated at school. Mrs Anush Geghamyan's class had prepared a special performance dedicated to their beloved mothers. While reciting each line in our sweet mother tongue, the children conveyed their joy and warmth, their love and gratitude to their beloved mothers: "I love my mother's smile", "I love my mother's eyes", "In the whole wide world, there's no mother like my mother", "I love my mother's kiss", "I love the delicious food cooked by my mother".

It is gratifying that our children appreciate and value the important role of mothers, their infinite dedication, love, affection and kindness.

At the end of this beautiful performance, the children presented colourful flowers to all the mothers in the hall.

Մարզական Օր – Sports' Day

Մայիսի 19-ին մեր դպրոցի տարեկան մարզական օրն էր: Շատ հաճելի եւ խանդավառ մթնոլորտ մըն էր բոլոր աշակերտութեան, ծնողքներուն եւ նաեւ ուսուցիչներուն համար:

Ուսուցչական կազմի օժանդակութեամբ, գլխաւորութեամբ՝ տիկին Այդային եւ Տիկին Մարինէին, ինչպէս ամէն տարի, մեր փոքրիկներն ու պատանիները մրցեցան վազքի եւ հաւասարակշռութեան տարբեր հմտութիւններու մէջ, իսկ ծնողքը նոյնպէս մասնակցեցան վազքի մրցոյթի, մարզասիրութեան եւ առողջ վարքի օրինակ տալով իրենց զաւակներուն եւ դուստրերուն:

Կէսօրուայ ճաշին՝ ծնողական յանձնախումբը պատրաստած էր արդեն աւանդական դարձած սիրուած խորտիկներ եւ համեղ անուշեղէններ:

Մարզական օրուայ մրցումներուն յաղթական յայտարարուեցաւ նարնջագոյն՝ Կարս խումբը:

Our school Sports' Day took place on 19 May. The event created enthusiasm, lots of happy moments for our pupils and their parents.

Mrs Aida and Mrs Marine organised the events with the help of teaching staff and volunteers. Our lively children and teenagers competed in running and balancing races and their parents also took part in running races, acting as a role model of good sportsmanship and competition for their sons and daughters.

During lunch the Parents' Committee had prepared their customary popular burgers and grilled chicken sandwiches as well as delicious deserts and watermelon slices.

The winning team of the 2024 Sports' Day was the Orange Team (Kars).

Սարզական Օր – Sports' Day

Easyfundraising

Thank you to everyone who is supporting our school for free on #easyfundraising. We have already raised amazing £1.2k donations thanks to your continued support! If you have not signed up yet, please join today and you can raise free donations for our school every time you shop online. Over 8000 retailers like eBay, Marks and Spencer, John Lewis & Partners, Etsy, Tesco and Just Eat and etc will donate at no extra cost to you! Please sign up!

Դաշտահանդէս – Summer Fair

Յունիսի 23-ին մեր դպրոցի տարեկան զուարճանալի դաշտահանդէսն էր:
Ինչպէս ամէն տարի, բոլոր ներկաները բարձր տրամադրութեամբ մասնակցեցան այս խրախճանքին ու վայելեցին հաճելի մթնոլորտն ու համեղ ուտելիքը:
Փոքրիկները զբաղեցան զանազան տեսակի խաղերով եւ զուարճացան իրարու հետ:
Մեծ շնորհակալութիւն կը յայտնենք մեր սիրելի ծնողական յանձնախումբին եւ դպրոցի միշտ աջակից եղող բարեկամներուն այս յաջող ձեռնարկը կազմակերպելու եւ համեղ խորոված ու տարբեր տեսակի անուշեղէններ պատրաստելու: Բոլորին անխնայ աշխատանքն ու զոհաբերութիւնը մեծապէս կը գնահատենք: Վարձքերնիդ կատար:

June 23rd was our school's annual fun fair.
Like every year, all those present participated in this event in high spirits and enjoyed the pleasant atmosphere and delicious food.The children played various games and had fun with each other.
We would like to thank our dear parent committee and friends who support the school for organizing this successful event and preparing delicious barbecue and various kinds of sweets.

Ամավերջի Հանդէս

Հուլիսի 7-ին տեղի ունեցավ Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանի ամավերջի հանդեսը: Վարժարանի տնօրենուհի՝ տիկին Ռուզաննա Թաթուլյանը ողջունեց ներկաներին և ամփոփեց 2023- 2024 թթ. ուսումնական տարվա ընթացքում տեղի ունեցած ձեռքբերումները:

Այս տարվա հանդեսը նվիրված էր Արամ Խաչատրյանի 120, Շառլ Ազնավուրի և Պարույր Սևակի 100 ամյակներին: Նրանց պատվին վարժարանի սաները ներկայացրին Արամ Խաչատրյանի «Երևան», Շառլ Ազնավուրի «Քեզ համար Հայաստան», ինչպես նաև Արեգ Լուսինյանի «Բարձրիկ Հայաստան » երգերը, որոնք մեծ խանդավառությամբ ընդունվեց ներկաների կողմից:

Յուրաքանչյուր դասարան յուրովի էր պատրաստվել այս հանդեսին: Աշակերտները գեղեցիկ բանաստեղծություններով և հետաքրքիր փաստերով ներկայացրեցին Արամ Խաչատրյանի, Շառլ Ազնավուրի, Պարույր Սևակի և Կոմիտասի կյանքից դրվագներ:

Միջին դասարանի աշակերտները հիանալի բեմադրություններ էին պատրաստել, ինչպիսիք էին Հ. Թումանյանի «Պապն ու Շաղգամը» և «Անխելք Մարդը»: Աղջիկների պարային խումբը ներկայացրեց Արամ Խաչատրեանի «Գայանէ» բալետից «Վարդագոյն աղջիկների պար», որը հիացրեց բոլորին:

Ավարտական դասարանի աշակերտները «Մենք և մեր դպրոցը» պատկերի տեսքով ներկայացրին վարժարանում իրենց անցկացրած տարիները:

Ինչպես ամեն տարի այնպես էլ այս տարի հանդեսն ավարտվեց դպրոցի այս տարվա շրջանավարտներին ավարտական վկայականների, Քասարճեան Սիս խնամակալության մրցանակների, Անահիտ Ղազարյան գավաթի, Մարզական և Գիտելիքի մրցույթի հաղթող խմբին մրցանակի հանձնումով:

Այդ բարի գործը ստանձնել էին վարժարանի տնօրենուհի տիկ. Ռուզաննա Թաթուլյանը, վարժարանի հոգաբարձուների խորհրդի ատենապետ պրն Կարօ Գարապլյլքեանը և կրթական հանձնախմբի ատենապետուհի տիկ Սիլվա Շամմասեանը: Այս տարի Լոնդոնի Հայկական Օպերան շրջանավարտներին նվիրեց Ավետ Տերտերյանի «Կրակի օղակ» օպերայի տոմսեր:

Հանդեսի ավարտին արժանապատիվ Տեր Հայր Շնորհք Բաղդասարյանը փոխանցեց իր խոսքը և օրհնությունը վարժարանին, աշակերտներին և բոլոր ներկաներին: Հանդէսին ներկայ էին Բրիտանահայ Համայնքային Խորհրդի փոխ ատենապետ պրն Ռաֆֆի Սարգսյանը, համայնքի մի շարք կազմակերպութիւնների ներկայացուցիչներ, վարժարանի նախկին ուսուցիչներ, շրջանաւարտ-ներ, այլ հիւրեր:

Դպրոցէն ներս ունինք "Առաջարկներու Տուփ" մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:

Ամավերջի Հանդէս – End of Year Performance

On July 7, our school's graduation ceremony was held. Headteacher of the school, Mrs. Ruzanna Tatulyan, welcomed the attendees and summarised the achievements of the academic year.

This year's end of year performance was dedicated to the 120th anniversary of Aram Khachatryan, 100th anniversary of Charles Aznavour and Paruyr Sevak. In their honour, the students of the school presented the songs "Yerevan" by Aram Khachatryan, "For you Armenia" by Charles Aznavour, as well as "Bardzrik Hayasdan" by Areg Lusinyan, which were enthusiastically received by the audience.

Each class prepared excellent performances of different kind; the students acted a few short plays, sang, played musical instruments, danced traditional Armenian dances and a ballet from A. Khachatryan's Opera.

The students of the graduating class presented a short play about the years they have spent at the school entitled "We and our school".

The event ended with the presentation of the graduation certificates to this year's graduates by the Headteacher Mrs. Ruzanna Tatulyan, the chairman of the governors of the school, Mr. Karo Garapiyekian, and the chairman of the educational committee, Mrs. Silva Shammasian., as well as different awards, like the Sis Kasarjian guardianship, Anahit Ghazaryan Cup, and the awarding of the winning team of the Sports and Knowledge Competition.

This year, London Armenian Opera presented tickets to Avet Terteryan's "Ring of Fire" opera.

At the end of the event, the venerable Father Shnoorkh Baghdasaryan conveyed his blessings to the school, students and all present.

Armenian Summer Festival

This year the Armenian Summer Festival took place on 16th June.
K Tahta Armenian Community Sunday school presented a stall, shared with ACC.
We presented the books, that we use for teaching at our school, including the ABC book "Sasuntsi David" adopted for English speakers, in Eastern and Western dialect, and the text book "Armenian Language for the new learner", that has been created by our teachers. All visitors expressed interest to presented books.
Thanks to Srbazan Hayr and his team for organising this amazing event.
K. Tahta Armenian Community Sunday School Classes are held every Sunday from 10:30a.m. to 1:45p.m. at Twyford Church of England School, Twyford Crescent, Acton, London W3 9PP.

The Sunday school offers parallel classes both Eastern and Western Armenian to pupils aged between 3 and 16 years old, and it is composed of the following three sections: (1) Nursery Section (two years), (2) Pre–academic Section (two years), and (3) Academic Section (nine years). Classes are also offered to adults wishing to learn either Eastern or Western Armenian.
The Sunday School's curriculum covers various aspects of the Armenian language, namely reading, writing, conversation and grammar. Pupils are also taught about important events in the Armenian history, and they learn Armenian songs and dances.

School year 2024-2025 starts on 8 September 2024.
For more information about the K. Tahta Armenian Community Sunday School, please visit our Website and Facebook.
To contact us, please email: info@armenianschool.org.uk
Tel: 0044 (0) 785 483 8073

Website:
https://armenianschoo.org.uk/

Facebook
KTACSS

2024 - 2025 Տարեշրջան

Առաջին Եռամսեակ 8 Սեպտ. 2024 – 15 Դեկտ. 2024 Term I 8 September 2024 – 15 December 2024	
8 Սեպտեմբեր 8 September	Վերամուտ Back to school
20 Հոկտեմբեր 20 October	Մշակոյթի Օր - Թարգմանչաց Տօն Culture Day
27 Հոկտեմբեր 27 October	Արձակուրդ Half-Term Break
10 November	Open Day
17 Նոյեմբեր 17 November	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
15 Դեկտեմբեր 15 December	Նոր Տարուայ Հանդէս New Year's Celebration
Երկրորդ Եռամսեակ 12 Յունուար 2025 – 17 Մարտ 2025 Term II 12 January 2025 – 17 March 2025	
19 January	Open Day
9 Փետրուար 9 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
16 Փետրուար 16 February	Վարդանանց Տօն St Vartan's Day
23 Փետրուար 23 February	Արձակուրդ Half-Term Break
30 Մարտ 30 March	Մայրերու Օր Mothers' Day and Open Day
6 Ապրիլ 6 April	Զատկուայ Հանդէս Easter Celebration
Երրորդ Եռամսեակ 27 Ապրիլ 2025 – 6 Յուլիս 2025 Term III 27 April 2025 – 6 July 2025	
4 May	Open Day
11 Մայիս 11 May	Աշակերտական գիտելիքներու մրցում Quiz for students
18 Մայիս 18 May	Մարզական Օր Sports' Day
25Մայիս 25May	Արձակուրդ Half-Term Break
8 June	Open Day
22 Յունիս 22 June	Դաշտահանդէս School BBQ
6 Յուլիս 6 July	Ամավերջի Հանդէս End of Year Assembly

Խմբագիրներ՝ Տիկ Մարիանա Հալաճ Ասմինեան,, Տիկ Նուշիկ Պոհճալեան, Տիկ Մարինէ Մարդանեան,
Տիկ Քրիստինէ Նանեան, Տիկ Անուշ Գեղամեան
Խորհրդատու Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան